Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 3

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2027/01» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով վարչական սարքավորումների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

06.11.2026 թվական ք. Գյումրի

Օրակարգ - «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2027/01» ծածկագրով մրցույթի 2-րդ չափաբաժնի Հրավերի վերաբերյալ ստացված հարցման մասին

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները՝ 05.11.2026 թվականին ժամը 13:14:37 e-AUCTION համակարգի միջոցով ստացվել է հարցում հրավերի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ:

Հարցում՝ «Հարգելի պատվիրատու Հայաստանում հավաքված ամբողջը մեկում համակարգիչը նույնպես ընդունելի է պատվիրատուի համար»:

Պատասխան հարցման վերաբերյալ

Ղեկավարվելով վերոհիշյալ կարգավորումներով և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից (Հիմք պատասխանատու ստորաբաժանման կողմից 06.11.2026 թվականի գրությունը) տրված եզրակացությունը՝ գնահատող հանձնաժողովը քննարկել է ստացված հարցումը և որոշել է տրամադրել հետևյալ պարզաբանումը.

«e-AUCTION համակարգի միջոցով իրականացված հարցմանը ի պատասխան հայտնում ենք, որ գնման առարկա հանդիսացող «Ամբողջը մեկում» (մոնոբլոկ) համակարգչի տեխնիկական բնութագրերով պահանջվում է հստակ համապատասխանություն, առաջարկվող ապրանքն իր բնութագրերով **ամբողջությամբ և անշեղորեն պետք է համապատասխանի** հրավերով (տեխնիկական բնութագրով) սահմանված պահանջներին ապա այն ընդունելի է:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել հարցման կապակցությամբ տրամադրվող պատասխանի տեքստը:
2. Հանձնաժողովի քարտուղարին՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ապահովել սույն արձանագրության հրապարակումը տեղեկագրում (առանց հարցումը կատարած մասնակցի տվյալների):

Հանձնաժողովի նախագահ՝ Աստղիկ Ալեքսանյան

Անդամներ՝ Իրինա Ջանոյան

Անահիտ Հարությունյան

Համակարգող քարտուղար՝ Զարիկ Մուրադյան